ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-26/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 08-ը հունիսի 2018թ.
ժամը 14^{30}

Քանի որ հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու ՀՀ ՊՆ ՆՏԱԴ թիկունքային ապահովման վարչության պետի տեղակալ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Հ. Մելիքյանը բացակայում էր, հանձնաժողովի նիստը նախագահեց՝ ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի թիկունքային ապահովման վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Գ. Ուստյանը,

գնահատողներ՝
ՀՀ ԶՈՒ ԳՇ ռազմանվագախմբային բաժնի պետ-գլխավոր զինվորական դիրիժոր, գնդապետ Ա. Պողոսյան,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա ավագ լեյտենանտ Ս. Նիկոլյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի սպա, մայոր Կ. Բրուտյան,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Ա. Մաղաքյան

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-26/2» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Մաղաքյան)

1. **«Սարկիս Կազանջյան Ընդ Սանս» ՍՊԸ-ի** կողմից, որպես շտկում ներկայացված տեխնիկական բնութագրերի քննարկման և ընտրված մասնակցի որոշման մասին.
2. **«Էմ Դի ԷյՋ» ՍՊԸ**-ի հետ բանակցություններ անցկացնելու վերաբերյալ
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

1. **«Սարկիս Կազանջյան Ընդ Սանս» ՍՊԸ-ի** կողմից, որպես շտկում ներկայացված տեխնիկական բնութագրերի քննարկման և ընտրված մասնակցի որոշման մասին.
«Էմ Դի ԷյՋ» ՍՊԸ-ի հետ բանակցություններ անցկացնելու վերաբերյալ

(Ա. Մաղաքյան)

1.1 **«Սարկիս Կազանջյան Ընդ Սանս» ՍՊԸ-ի** կողմից, սահմանված ժամկետում և կարգով ներկայացվեց, որպես շտկում պահաջված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (Հավելված 6.1) և գնահատող հանձնաժողովը քննարկելով մասնակցի կողմից 6-րդ և 7-րդ չափաբաժինների մասով ներկայացված տեխնիկական բնութագրերը՝ որոշեց գնահատվել բավարար՝ գնանշման հարցման հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

1.2 Քանի որ «Երաժշտական գործիքների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-26/2» ծածկագրով ընթացակարգի 4-րդ չափաբաժնի մասով հաջորդող տեղ զբաղեցնող՝ **«Էմ Դի ԷյՋ» ՍՊԸ-ի**, առաջարկված գինը գերազանցում էր պատվիրատուի՝ տվյալ գնման համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, գնահատող հանձնաժողովի կողմից, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի պահանջները, գների նվազեցման նպատակով **08.06.2018թ. ժամը 11:30-ին** ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) անցկացել բանակցություններ: Սակայն կազմակերպված բանակցության մասնակիցը չներկայացավ և առաջարկված գինը մնաց անփոփոխ:

1.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց 4-րդ չափաբաժնի մասով ընթացակարգը հայտարարել չկայացած հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին):

1.4 Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ գնահատող հանձնաժողովը որոշեց մասնակիցների կողմից ներկայացված թաստաթղթերը այդ թվում ապրանքների տեխնիկական բնութագրերը գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-26/2» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին, վերջիններիս հայտարարել ընտրված(հաղթող) մասնակիցներ այն չափաբաժիններում, որտեղ նրանք ճանաչվել

էին առաջին տեղ զբաղեցնող մասնակից և անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.5 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-26/2» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Գ. Ուստյան
Գնահատող	Ա. Պողոսյան
Գնահատող	Ս. Նիկոլյան
Գնահատող	Կ. Բրուտյան
Գնումները համակարգող՝	Ա. Մաղաքյան